ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՄՇԴ 06

ք. Երևան « 02 » « 02» 2022 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս նախարարության կանոնադրության հիման վրա գործող գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Վ. Գասպարյանի, մի կողմից, և **«Խնկո-Ապոր անվան ազգային մանկական գրադարան»** պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կատարող)՝ ի դեմս կազմակերպության կանոնադրության հիման վրա գործող տնօրեն Ռ. Տոնոյանի, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ նաև՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը պարտավորվում է սույն Պայմանագրով սահմանված վճարի դիմաց սույն պայմանագրով սահմանված կարգով ու ժամկետում կատարել Պայմանագրի 2.3-րդ կետով և իր կանոնադրությամբ նախատեսված գրադարանային հավաքածուների պահպանում, համալրում, ընթերցողների սպասարկում, գրադարանային միջոցառումների կազմակերպում և այլ գործառույթներ (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն Պայմանագրի անբաժանելի մաս կազմող՝

1.1.1. գրադարանային հավաքածուների պահպանման, համալրման, ընթերցողների սպասարկման, գրադարանային միջոցառումների կազմակերպման կանխատեսվող ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշների՝ հավելված N 1,

1.1.2. ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցի՝ հավելված N 2,

1.1.3. ոչ ֆինանսական ցուցանիշների կատարման վերաբերյալ հաշվետվության՝ հավելված N 3:

1.2. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման դիմաց վճարումը կատարվում է դրամաշնորհի հատկացման ձևով՝ «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի N 2 աղյուսակի «1124. Գրահրատարակչության և գրադարանների ծրագրի» «11004. Գրադարանային ծառայություններ» միջոցառման համար նախատեսված բյուջետային հատկացումների սահմաններում:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2. 1. Պատվիրատուն պարտավոր է՝

2.1.1. Սույն պայմանագրի պահանջներին համապատասխան՝ Կատարողից ընդունել պատշաճ ձևով ու կարգով կատարված աշխատանքները և հաշվետվությունները:

2.1.2. Իր և Կատարողի կանոնադրություններով սահմանված իրավասությունների շրջանակներում Կատարողին ցուցաբերել մեթոդական և կազմակերպական օգնություն:

2.2. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.2.1. Ցանկացած ժամանակ (պարբերաբար), առանց որևէ սահմանափակումների, ստուգել Կատարողի կողմից սույն պայմանագրի կատարման ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս կանոնադրական գործունեությանը (բացառությամբ օրենքով և Կատարողի կանոնադրությամբ սահմանված դեպքերի):

2.2.2. Կատարողից պարբերաբար պահանջել ու ստանալ տեղեկություն սույն պայմանագրի կատարման ընթացքի մասին:
2.2.3. Իր իրավասությունների սահմաններում կասեցնել Կատարողի կողմից ոչ պատշաճ ձևով կամ կարգով կատարվող աշխատանքները:
2.2.4. Կատարողից պահանջել առանց լրացուցիչ վճարի վերստին կատարել ոչ պատշաճ ձևով կամ կարգով կատարված աշխատանքները:
2.2.5. Վերահսկել սույն պայմանագրով Կատարողին հատկացված դրամական միջոցների նպատակային օգտագործումը:
2.2.6. Պայմանագրի 2.3-րդ կետով նախատեսված պարտավորությունները վերանայել (փոփոխություն կատարել) նախորդ տարվա հաշվետվությունների արդյունքների հիման վրա:

2.3. Կատարողը պարտավոր է՝

2.3.1. Ժամանակին, պատշաճ ձևով ու կարգով կատարել սույն պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված աշխատանքները, դրանց հաշվառումը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության և իրավական այլ ակտերի համաձայն:
2.3.2. Ապահովել կատարողի կայուն գործունեությունը, ֆոնդարաններում գրադարանային փաստաթղթերի անվտանգ պահպանությունը, ազդանշանային և հակահրդեհային համակարգի շահագործումը:

Գրադարանային հավաքածուի համալրում և պահպանում

2.3.3. Ապահովել գրադարանային հավաքածուների համալրումը, հաշվառումը, պահպանությունը, վերականգնումը, ինչպես նաև օգտագործման համար ոչ պիտանի գրականության դուրսգրումը:
2.3.4. Ստուգել և հաշվառել Ընթերցասրահի՝ 9033, Երաժշտական-նոտագիր գրականության բաժնի՝ 16931, Իրանական ընթերցասրահի՝ 1586 միավոր առձեռն գրականության հավաքածուները, ժամկետ՝ 2022 թվական, նոյեմբեր:
2.3.5. Համալրման գործընթացում առաջնահերթություն սահմանել ժամանակակից մանկական հրատարակությունների ձեռքբերումը:

Աշխատանք գրացուցակների հետ

2.3.6. Ապահովել այբբենական, կարգային և վերնագրային գրացուցակների համապատասխանեցումը գրադարանային հավաքածուներին: Ներկայացնել կիսամյակային և տարեկան հաշվետվություն՝ համաձայն Պատվիրատուի կողմից տրամադրված ձևաչափի:

Գրադարանային տեղեկության սպասարկում

2.3.7. Ապահովել գրադարանային-տեղեկատվական սպասարկումը, այդ թվում էլեկտրոնային տեղեկության (ինտերնետ, տեսալսողական նյութեր, էլեկտրոնային հրապարակումներ) մատչելիությունը:
2.3.8. Ապահովել միջգրադարանային բաժնության միջոցով այլ գրադարաններին գրականության և նյութական այլ կրիչների ժամանակավոր տրամադրումը:

Գրադարանային միջոցառումներ

2.3.9. Ապահովել ավանդական միջոցառումների (Մանկապատանեկան գրքի շաբաթ, Երեխաների պաշտպանության միջազգային օր, Մանկական գրքի միջազգային օր,Պոեզիայի համաշխարհային օր, Գրադարանավարի օր, Ազգային գրադարանային շաբաթ, Գիրք նվի-

ռելու օր և այլն), գրքերի շնորհանդեսների, հեղինակների, մշակույթի գործիչների հետ հանդիպումների, գրական ցերեկույթների, երեկոների, ցուցահանդեսների և այլ միջոցառումների կազմակերպումը: Կազմակերպել միջոցառումներ՝ ըստ 2022 թ. հոբելյանների հաստատված ցանկի, գրքին, ընթերցանությանը և գրականությանը նվիրված ազգային և միջազգային օրերի:

Հոբելյաններ՝ Սայաթ-Նովա 300, Էդուարդ Միլիտոնյան 70, Յուրի Սահակյան 85, Գուրգեն Գաբրիելյան 95, Էդուարդ Ուսպենսկի 85, Վահագն Դավթյան 100, Եղիշե Չարենց 125, Վարդգես Պետրոսյան 90, Ալ Հեքիմյան 95, Կարեն Դեմիրճյան 90, Մոնթե 65, Միշել Լեգրան 90, Բելլա Ախմադուլինա 85,Մոլիեր 400, Ռուբեն Մաթևոսյան 80, Ծերենց 200, Կարինե Խոդիկյան 65 Ջոան Ռոուլինգի Հարրի Փոթթեր- 25:

2.3.10. Կազմակերպել և իրականացնել միջոցառումներ նվիրված ՀՀ պետական, ժողովրդական տոներին և հիշատակի օրերին:

2.3.11. Կազմակերպել և իրականացնել միջոցառումներ «Արևմտահայ գրականության միամսյակ» ծրագրի շրջանակում:

2.3.12. «Կարդանք, սովորենք, ստեղծենք» և «Բալասան» խորագրով գրադարանի հեղինակային կրթական և մշակութային ծրագրերի շրջանակներում իրականացնել միջոցառումների շարք՝ փորձագետ-մասնագետների մասնակցությամբ /թիրախային խմբեր՝ Արցախյան պատերազմի ընթացքում վիրավորում ստացած ապաքինվող ռազմիկներ և զոհված զինծառայողների անչափահաս երեխաներ/:

2.3.13. Գրադարանում նոր միջավայր ձևավորելու նպատակով ակտիվացնել համագործակցությունը հասարակական կազմակերպությունների, գրողների, ստեղծագործական միությունների հետ, նպաստել նոր ծառայությունների ներդնմանը:

2.3.14. Կազմակերպել և իրականացնել Գրադարանավարի օրվան նվիրված միջոցառումները՝ կարգախոսը և գովազդային պաստառների ձևավորումը համաձայնեցնել Պատվիրատուի հետ:

2.3.15. Ապահովել միջոցառումների հանրայնացումը մամուլի, սոցցանցերի, լրատվական տարբեր կայքերի միջոցով: Համագործակցել հրատարակչությունների և գրավաճառ ցանցի հետ՝ նոր գրքերի շնորհանդեսները համատեղ կազմակերպելու նպատակով:

Կրթական ծրագրեր

2.3.16. Կազմակերպել և իրականացնել ՀՀ գրադարանավարների վերապատրաստման դասընթացներ 45 գրադարանավարի համար:

2.3.17. Իրականացնել համատեղ միջոցառումներ ներառական և հատուկ դպրոցների, ինչպես նաև նմանատիպ կազմակերպությունների հետ՝ նրանցում ընդգրկված երեխաներին գրադարանում իրականացվող միջոցառումներին ներգրավելու նպատակով:

2.3.18. Կազմակերպել «Ամառային դպրոց»՝ 6-13 տարեկան երեխաների համար՝ ընդգրկելով խոցելի խմբերի, ինչպես նաև արցախյան պատերազմի մասնակիցների և զինծառայողների երեխաներին:

2.3.19. Կազմակերպել և իրականացնել «Իմ ապագա մասնագիտությունը» խորագրով ծրագիրը՝ պատանիների շրջանում մասնագիտական կողմնորոշման նպատակով:

2.3.20. Հանրապետության հմուտ մասնագետների ներգրավմամբ կազմակերպել և իրականացնել Մեդիագրագիտության դասընթացներ պատանիների համար:

2.3.21. Իրականացնել կրթական ծրագրեր հանրության տարբեր տարիքային խմբերի համար:

2.3.22. Հրատարակել «Մանկապատանեկան գրականություն. Հիշարժան տարեթվեր-2023» օրացույցը և նախապատրաստական աշխատանքներ իրականացնել «Հայ մանկական գրականության մատենագիտություն» պրակ 10-ի /2002-2007թթ./ ուղղությամբ:

Միջազգային համագործակցություն

2.3.23. Ամրապնդել կապերը միջազգային գրադարանային, մշակութային և հասարակական կազմակերպությունների, ՀՀ-ում գործող դեսպանատների հետ:

2.3.24. Շարունակել «Հեքիաթի դեսպաններ» հեքիաթապատումների շարքը՝ Հայաստանում հավատարմագրված դեսպանների մասնակցությամբ:

2.3.25. Մանկապատանեկան գրքի միջազգային կոմիտեի /IBBY/ հետ համատեղ ՀՀ ժամանակակից գրողների և մանկագիրների ներգրավմամբ կազմակերպել և իրականացնել ամառային ընթերցանության ճամբարներ՝ ՀՀ 5 մարզերի շուրջ 50 պատանիների համար:

2.3.26. ՀՀ-ում գործող Իրանի, ԱՄԷ, Չինաստանի դեսպանատների հետ համատեղ կազմակերպել և իրականացնել «Միջմշակութային երկխոսություն» խորագրով միջոցառումների շարք՝ գրադարանում գործող Իրանական, Արաբական, Չինական անկյուններում:

2.3.27. Պայմանագրից բխող աշխատանքներն իրականացնել՝ ապահովելով Պայմանագրի պարտադիր պահանջները:

2.3.28. Հրապարակել Պատվիրատուի անունը, իսկ համաֆինանսավորման դեպքում տրամադրել ամբողջական տեղեկատվություն՝ ծրագրին աջակցող կազմակերպության, ֆինանսավորման չափի և վերջինիս հետ ձեռք բերված այլ պայմանավորվածությունների մասին:

2.3.29. Սույն Պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված աշխատանքների կատարման գործընթացը կազմակերպել «Գնումների մասին» ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

2.3.30. Սույն պայմանագրով սահմանված պարտավորություններն իրականացնել Պատվիրատուի կողմից հաստատված մեթոդական ցուցումների, հրահանգների և այլ իրավական ակտերի (փաստաթղթերի) պահանջներին համապատասխան:

2.3.31. Պատվիրատուին անհապաղ հայտնել սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտների մասին և միաժամանակ ձեռնարկել իր կողմից հնարավոր բոլոր միջոցները՝ այդ խոչընդոտներն անհապաղ վերացնելու համար:

2.3.32. Պատվիրատուի պահանջով նրան հաղորդել տեղեկատվություն աշխատանքների կատարման ընթացքի մասին, ինչպես նաև ներկայացնել սույն պայմանագրի կատարմանը վերաբերող ֆինանսական և բովանդակային հաշվետվությունը (ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են Կատարողի մոտ): Կատարողը պատասխանատվություն է կրում հաշվետվությամբ ներկայացված տվյալների հավաստիության համար: Բովանդակային հաշվետվության հետ ներկայացնել իրականացված միջոցառումների մասին համապատասխան նյութեր (լուսանկարներ, լոգոտիպ կամ այլ գրաֆիկական պատկեր կամ ազդագրեր), հրավիրատոմսեր, մամուլի հրապարակումներ և այլ տեղեկատվական նյութեր)՝ էլեկտրոնային կրիչներով:

2.3.33. Պատվիրատուին ներկայացնել եռամսյակային ու տարեկան հաշվետվություններ համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 2013 թվականի փետրվարի 4-ի N 104-Ն և 2019 թվականի մարտի 13-ի N 254-Ն հրամանների, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ և իրավական այլ ակտերով նախատեսված ձևով ու կարգով:

2.3.34. Պատվիրատուի հետ նախապես համաձայնեցնել նրա իրավասությանը վերապահված հարցերի լուծման տարբերակները:

2.3.35. Սույն Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո Պատվիրատուի հաստատմանը ներկայացնել Կատարողի ֆինանսատնտեսական գործունեության նախահաշիվը՝ համապատասխան հիմնավորումներով: Նախահաշվի յուրաքանչյուր ծախսային ուղղության մեջ կատարվող փոփոխությունը նախապես՝ մինչև փաստացի ծախսերի կատարումը համաձայնեցնել Պատվիրատուի հետ: Նախահաշվում փոփոխությունների ներկայացման առաջարկի վերջնաժամկետն է 2022 թվականի դեկտեմբերի 20-ը: Աշխատանքների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները (խնայողությունները) ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2022 թվականի դեկտեմբերի 24-ը:

2.3.36. Ապահովել գրադարանի կայուն գործունեությունը:

2.3.37. Ապահովել ազդանշանային և հակահրդեհային համակարգի շահագործումը:

2.4. Կատարողն իրավունք ունի՝

2.4.1. Պատվիրատուից պահանջել ընդունել սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված և Կատարողի կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված աշխատանքները:

2.4.2. Պատվիրատուից պահանջել վերացնել Կատարողի գործողություններից (անգործությունից) անկախ՝ Պատվիրատուի մեղքով սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտները կամ վերանայել սույն պայմանագրի պայմանները:

2.4.3. Վաղաժամկետ լուծել սույն պայմանագիրը՝ սույն պայմանագրով կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

3.1. Սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված աշխատանքների ընդհանուր արժեքը սահմանված է մինչև **216303.9** հազար (երկու հարյուր տասնվեց միլիոն երեք հարյուր երեք հազար ինը հարյուր) դրամ՝ ներառյալ հարկերը, տուրքերը և այլ պարտադիր վճարները: Այդ գումարի չափը կարող է փոփոխվել սույն պայմանագրով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հիմքերով ու կարգով:

3.2. Սույն պայմանագրի 3.1-ին կետում նշված գումարը Պատվիրատուն պետք է Կատարողին վճարի սույն պայմանագրի 2-րդ հավելվածով սահմանված ժամկետներում, Կատարողի՝ սույն պայմանագրում նշված գանձապետական հաշվեհամարին փոխանցումներ կատարելու եղանակով:

3.3. Կատարողի կողմից աշխատանքների կատարման՝ սույն պայմանագրով սահմանված ցուցանիշներն ու պայմանները խախտելու դեպքում Պատվիրատուն իրավունք ունի վերանայել սույն պայմանագրի 3.1-ին կետում նշված գումարի չափը և դրա վճարման ժամանակացույցը:

3.4. Համաձայն «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2022 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ

4.1. Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում երկու Կողմերի ստորագրության պահից և գործում է մինչև 2023 թվականի հունվարի 31-ը:

4.2. Սույն Պայմանագրի գործողությունը տարածվում է 2022 թ. հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

5. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1. Սույն պայմանագրի 1-ին կետում նշված և կատարված աշխատանքները Կատարողի կողմից ներկայացվում են Պատվիրատուի ընդունմանը ոչ ուշ, քան յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 10-ը (հավելված 3):

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունները կողմերը պարտավոր են կատարել պատշաճ և սահմանված ժամկետներում: Դրանք ոչ պատշաճ կամ ժամկետանց կատարելու, չկատարելու կամ կատարելուց խուսափելու դեպքում, ինչպես նաև իրենց գործողություններով կամ անգործությամբ սույն պայմանագրի կատարման համար խոչընդոտներ ստեղծելու, մյուս կողմին վնաս պատճառելու կամ կանխատեսվող եկամուտներից զրկելու համար կողմերից յուրաքանչյուրը կրում է պատասխանատվություն մյուս կողմին պատճառած վնասների և բաց թողնված օգուտների լրիվ ծավալով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.2. Սույն պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել կողմերից որևէ մեկի նախաձեռնությամբ՝ մյուս կողմի՝ սույն պայմանագրի պայմանները խախտելու դեպքում: Այդ ժամանակ նախաձեռնող կողմը պետք է ստանա վնասների և բաց թողնված (չստացված) եկամուտների լրիվ չափով փոխհատուցում:

6.3. Սույն պայմանագիրը վաղաժամկետ դադարեցնելը կամ լուծելը կողմերից որևէ մեկի համար այն կատարել շարունակելը աննպատակահարմար լինելու դեպքում կամ այլ պատճառաբանությամբ չի թույլատրվում: Նման դեպքում մյուս կողմն իրավունք ունի կամ ստանալ սույն պայմանագրի 6.1-ին կետով նախատեսված լրիվ փոխհատուցումը, կամ պահանջել սույն պայմանագրի հարկադիր կատարումը:

6.4. Սույն պայմանագրով սահմանված ժամկետները Կատարողի կողմից չպահպանվելու դեպքում վերջինս, եթե Պատվիրատուին չի ներկայացրել դրա վերաբերյալ հիմնավոր բացատրություն, վճարում է տույժ Պայմանագրի տվյալ ժամանակահատվածի համար սահմանված գնի 0.05 (հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացման յուրաքանչյուր օրացուցային օրվա համար:

6.5. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Կատարողը, եթե Պատվիրատուին չի ներկայացրել դրա վերաբերյալ հիմնավոր բացատրություն, վճարում է տուգանք չկատարված աշխատանքի 0.5 (հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

7.1. Պատվիրատուն ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

7.2. Մոնիթորինգն իրականացվում է Պատվիրատուի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

7.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կատարողին տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

7.4. Պատվիրատուն ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:
7.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կատարողից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1. Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը:
8.2. Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով՝ առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության:
8.3. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի երկկողմ գրավոր համաձայնություն կազմելու միջոցով:
8.4. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:
8.5. Սույն պայմանագիրը կնքելիս կողմերը հաստատում են, որ դրանով իրենց շահերը և օրինական իրավունքները ոչ մի կերպ չեն խախտվում կամ սահմանափակվում:
8.6. Սույն պայմանագիրը կազմված է 11 թերթից (ներառյալ հավելվածները), կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

9. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՈՂՄԵՐԻ ՄԱՍԻՆ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՏԱՐՈՂ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Խնկո-Ապոր անվան ազգային մանկական գրադարան» ՊՈԱԿ
ք. Երևան, Վ. Սարգսյան 3	ք. Երևան, Տերյան 42/1
Կառավարական տուն 2	ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Հ/Հ 900018001918
ՀՀ 900011032795	ՀՎՀՀ 02512327
ՀՎՀՀ 02698732	Հեռ.՝ 52-12-22
Պատվիրատուի ստորագրությունը	Կատարողի ստորագրությունը
Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝	Տնօրեն՝
---------- Վ. Գասպարյան	---------- Ռ. Տոնոյան
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1

« 02 » « 02 » 2022 թ. **N ՄՇԴ 06** պայմանագրի

«Խնկո-Ապոր անվան ազգային մանկական գրադարան» ՊՈԱԿ-ի 2022 թվականի համար կանխատեսվող ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշները

Ցուցանիշներ	**Միավոր**	**Քանակը**
Գրադարանային հավաքածուների պահպանում	հատ	538228
Գրադարանային հավաքածուների օգտագործում (ընթերցողի քանակը)	մարդ	**18000**
- իգական սեռի	մարդ	*12000*
- արական սեռի	մարդ	*6000*
Գրադարանային տեղեկույթի սպասարկում (սպասարկված միավորների թիվը), որից՝	հատ	**486242**
Գրքերի և պարբերական մամուլի միջոցով	հատ	*479242*
Էլեկտրոնային միջոցներով՝ CD, DVD և այլ կրիչներ	հատ	*7000*
Գրադարանային հավաքածուների համալրում, որից՝	հատ	**1000**
Ձեռք բերվող գրքերի քանակը	հատ	*990*
Ձեռք բերվող պարբերականների քանակը	հատ	*10*
Թվայնացված էջերի մշակում	էջ	7000
Միասնական համահավաք էլեկտրոնային գրացուցակ մուտքագրվող գրականության քանակը	հատ	10000
Գրադարանավարների վերապատրաստման դասընթաց	մարդ	45
Եկամուտներ, այդ թվում	հազար դրամ	224303.9
- տրամադրվող դրամաշնորհ	հազար դրամ	**216303.9**
- ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից	հազար դրամ	5200.0
- տարածքի, ալեհավաքների, սրահի վարձակալությունից և այլ գործունեությունից	հազար դրամ	2800.0
Ծախսեր	հազար դրամ	224303.9

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ք. Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900011032795
ՀՎՀՀ 02698732
Պատվիրատուի ստորագրությունը
Գլխավոր քարտուղարի
պարտականությունները կատարող՝

---------- Վ. Գասպարյան

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝

«Խնկո-Ապոր անվան ազգային մանկական գրադարան» ՊՈԱԿ
ք. Երևան, Տերյան 42/1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900018001918
ՀՎՀՀ 02512327
Հեռ.՝ 52-12-22
Կատարողի ստորագրությունը
Տնօրեն՝

---------- Ռ. Տոնոյան

Կ.Տ.

ՀԱՎԵԼՎԱԾ N 2

«02» «02» 2022 թ. N ՄՇԴ 06 պայմանագրի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ազմակերպության անվանումը՝ **«Խնկո-Ապոր անվան ազգային մանկական գրադարան» ՊՈԱԿ**

ւջետային ծախսերի գործառական դասակարգման՝

Ծրագիր 1124	Միջոցառում 11004	**Գրադարանային ծառայություններ**												
Ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի, ծառայության անվանումը	Բյուջետային ծախսերի տնտ. դասակարգման հոդվածը	Նախատեսվում է ֆինանսավորել Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեից, այդ թվում ըստ ամիսների (աճողական)												ԸՆԴԱՄԵՆԸ
		I եռամսյակ			I կիսամյակ			9 ամիս			տարի			
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին	4637	0.0	20803.2	**41606.4**	59200.4	76794.4	**94388.3**	112261.7	130135.0	**148008.4**	170773.6	193538.7	216303.9	**216303.9**
Ընդամենը		0.0	20803.2	**41606.4**	59200.4	76794.4	**94388.3**	112261.7	130135.0	**148008.4**	170773.6	193538.7	**216303.9**	**216303.9**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ կրթության, գիտության,
մշակույթի և սպորտի
նախարարություն
ք. Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900011032795
ՀԿՀՀ 02698732
Պատվիրատուի ստորագրությունը
Գլխավոր քարտուղարի
պարտականությունները կատարող՝

Վ. Գասպարյան

ԿԱՏԱՐՈՂ՝
«Խնկո-Ապոր անվան ազգային
մանկական գրադարան» ՊՈԱԿ
ք. Երևան, Տերյան 42/1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900018001918
ՀԿՀՀ 02512327
Հեռ.՝ 52-12-22
Կատարողի ստորագրությունը
Տնօրեն՝

Ռ. Տոնոյան

Կ.Տ.

Հավելված N 3

« 02» « 02 » 2022 թ. **N ՄՇԴ** 06 պայմանագրի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ծրագրի կամ քաղաքականության միջոցառման անվանումը	Չափորոշիչը (նկարագրությունը)	Չափորոշչի տեսակը	Ոչ ֆինանսական ցուցանիշներ					
			Ցուցանիշի հաստատված կանխատեսումը հաշվետու ժամանակահատվածի համար	Ցուցանիշի փոփոխություններն ըստ համապատասխան իրավական ակտի (+/-)	Ճշտված ցուցանիշը հաշվետու ժամանակահատվածի համար (սյուն 1–սյուն 2)	Փաստացի ցուցանիշը (կատարված և ընդունված) հաշվետու ժամանակահատվածում	Հաստատված և փաստացի ցուցանիշների տարբերությունը (սյուն 4 սյ. 3)	Տարբերության պատճառը (սյուն 2-ում նշված իրավական ակտերի հղումները և սյուն 5-ում նշված տարբերության պարզաբանումները)
Ա	Բ	Գ	1	2	3	4	5	6

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ք. Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900011032795
ՀՎՀՀ 02698732
Պատվիրատուի ստորագրությունը
Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝

---------- Վ. Գասպարյան

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝

«Խնկո-Ապոր անվան ազգային մանկական գրադարան» ՊՈԱԿ
ք. Երևան, Տերյան 42/1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900018001918
ՀՎՀՀ 02512327
Հեռ.՝ 52-12-22
Կատարողի ստորագրությունը
Տնօրեն՝

---------- Ռ. Տոնոյան

Կ.Տ.